Հաստատված է «Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի 2014թ. օգոստոսի 25-ի նիստում

Ռեկտոր՝ Ս.Ա.Սեդրակյան

ԿԱՐԳ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հասարակության հետ կապերի և հանրային տեղեկատվության տարածման կարգը համապատասխանում է <<Ուրարտու>> համալսարանի կանոնադրությանը:

<<Ուրարտու>> համալսարանի հանրային կապերի պատասխանատուն ներկայանում է որպես համալսարանի և վերջինիս արտաքին ու ներքին շահառուների հետ հաղորդակցության պահպանման ագենտ: Նշված հաղորդկացության հիմնական աղբյուրը ԶԼՄ-ներն են:

Համալսարանի ակադեմիական հանրությունը կարող է համալսարանի անունից տեղեկատվություն տրամադրել ԶԼՄ-ներին միայն բուհի հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հետ խորհրդակցելու արդյունքում:

Համալսարանը խրախուսում է բուհի արտաքին և ներքին շահառուների, ինչպես նաև կրթության ոլորտի ու այս ոլորտի հետ համագործակցող կողմերի հետ աշխատանքը:

Միայն համալսարանի հասարակայնության հետ կապերի պատասխանատուն է իրավասու ԶԼՄ-ներին համալսարանի անունից գրավոր տեղեկատվություն և նյութեր տրամադրել:

Գործընթացներ և ուղենիշներ

1. Համալսարանի ներկայացուցիչները արձագանքում են ՋԼՄ-ների ներկայացուցիչներին յուրաքանչյուր տիպի տեղեկատվություն տրամադրելու հարցում, սակայն համալսարանի անունից ներկայանալու պարագայում սերտ համագործակցում են հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հետ և նախապես պլանավորում տեղեկատվության մատուցման հնարավորություններն ու ձևերը:

2. ՋԼՄ-ների ներկայացուցիչները համալսարանի գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը ստանում են համալսարանի կայքէջից և կապ հաստատելով հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հետ: Համալսարանի բոլոր աշխատակիցները նշվածին համապատասխան ուղղորդում են իրենց հետ կապ հաստատած ՋԼՄ ներկայացուցիչներին:

3. Հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում ՋԼՄ ներկայացուցիչների հետ: Հանդիպումներում քննարկվելիք նյութը հասարակայնության հետ կապերի պատասխանատուն ներկայացնում է որպես համալսարանի ներկայացուցիչների կողմից ձեռք բերված համատեղ գործունեության արդյունք:

4. Համալսարանի հասարակայնության հետ կապերի պատասխանատուն ապահովում է համալսարանի մասին տեղեկատվության ներկայացման վերբալ և վիզուալ որակը:

5. Համալսարանի մասին տեղեկատվության տարածման հիմնարար և անընդհատ կատարելագործվող աղբյուրը շարունակում է լինել էլեկտրոնային կայքը:

6. Համալսարանի հասարակայնության հետ կապերի պատասխանատուն ապահովում է համալսարանի մասին հասարակական կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատաոճի, ներքին էթիկական վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցերի մշակում և դրանց իրագործում:

7. Համալսարանի հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պատրաստում է համալսարանի մասին տեսանյութեր և աուդիոնյութեր և ապահովում է դրանց տարածումը:

8. Համալսարանի հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում բուհի գիտական խորհրդին և ռեկտորին: